# ԼՐՈՅ ԳԻՐ

## ՄԵԾԻ ՏԷՐՈՒԹԵԱՆՆ ՕՍՄԱՆԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԱՄ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ — ՆՈՒՄԵՐԱ 28

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1832 ՄԱՅԻՍԻ 28։ ՈՐ Է ՌՄԽԸ ՄՈՒՀԱՐՐԷՄԻ 1։

Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ։


### ԳՈՐԾՈՑ ՆԵՐՔԻՆ

Ամէն մուհարրէմի սկիզբը որ է տարեգլուխ տաճկաց, բանաստեղծները բարեբաղդութի գուշակելու կերպով, թէ ոտանաւորով և թէ արձակ շարադրութիւնով՝ թարիխ գրանալու սովորութի ունէին։

Ուստի այս նոր տարեգլխուն ալ՝ արքային կենաց մշտնջենաւորութեը համար աղօթող միւտերրիմներէն՝ Մահմուտ փաշայ եղած դատաստանատանը (մահքէմէին) փոխանակ դատաւորի (նայիպ) Նազիֆ էֆէնտիին գրած թարիխը այս է. (Դոլի դալիպ հեմեան). ՌՄԽԸ՝ անոր արդարութիը յաղթօղ է միշտ։

Նաև արքունի դիվանին դրագիրներէն Թալիպ էֆէնտիին մէկ տող գրած թարիխը այս է. (Խան Մահմուտ գըլա մէվլա հիւմայուն սալինի). ՌՄԽԸ՝ Սուլթան Մահմուտ Խան Արքային տարին շնորհաւոր ընէ։

Այս մշտայաղթ թագաւորին և բարեխնամ Աշխարհակալին մերոյ՝ այս բարենշան նոր տարին շնորհաւոր ըլլայ. և վեհափառ անձին՝ մէկ տարին և մէկ ամիսը և մէկ օրը և մէկ ժամը հազարապատիկ ըլլալով՝ բաղդը պայծառ ըլլայ. և յիրաւի բարեյաղթութե արժանի եղած ըլլալով, իրեն թագաւորութե հովանին ամէն տեղ տարածվի, ամէն։

—

Սարըֆաթի նազըր էֆէնտին իր պաշտօնին հարկաւորութեն՝ արքունի մանուրէ գործերուն ձմուրվան հաշուստաներուն՝ ամէն մէկ տեսակին քանիմը կերպ օրինակները հիմիկուց շինել տըրվաւ. և յայտարար գրովմը փաշայքին դուռը մատուցանելով, անկէց ալ Կայմագամ փաշայի կողմանէ արքունի դրանը տըրվեցաւ։

Նաև Ինքնակալը՝ այս օրինակներուն հաւանութի ցոյց տալով, այն յայտարար գրին վեր'ի կողմը գրըված իր արքունի հրամանագրին մէջը՝ այն հաշուստաներէն շարլիքին օրինակին համար՝ մէկ քանի ծանօթութի տալով պատվէր ըրված էր. որ այն ամէն օրինակները Սերասքէրին քովը մընան, և այն հաշուստաները շինվելէն յետոյ՝ անոնց հետը համեմատվին։

Նաև յիշել պատվէրներուն հետն ալ՝

ժե

նոյն գրին մէջը այս կերպ յիշած էր․ Մեր կարգադրեալ զօրքերուն մէկ կողմանէ շատցնելը՝ Թագաւորական առաջին պահանջումն է․ և ասոնք ամէն ալ խէր զատակ համարուած ըլլալով, թէ ատոնց կերակուրներուն և թէ հարկաւոր եղած հագուստներուն աղէկ կերպով ջանք ըլլալն ալ յատկապէս կը խնդրեմ։

Ուստի նոյն գթութեան հրամանին համեմատ՝ յիշեալ հագուստներուն օրինակներուն հարկաւորութիւնը ՚ի գործ դրուեցաւ․

Այս բարձրեալն ած՝ Արքային երջանիկ կենացը երկարութիւն պարգեւէ․ և կարգադրեալ արքունի զօրքերը՝ աստղերու նման շատցընէ․

Վէրաւի Ինքնակալին յաւիտենականին շնորհքովը կատարելապէս ունեցած գթութենէը և ողորմութենէը հարկադրութենէ՝ իրեն Թագաւորութեան ներքեւը հովանաւորեալ բոլոր հաւատարիմ իր ծառայներուն վրայ պաշտպանութիւն և գթութիւն և բարութիւն ունենալը յայտնի է։ Նաեւ մանաւանդ իր կարգադրեալ զօրքերուն ամէն կերպով անհամար պարգեւներ տրուած է․ ուստի ամէն ալ Արքային ծառայելու պարտաւոր ըլլալնին բացայայտելու կարօտ չէ․

---

Ինչպէս Անատօլուի կողմը խրրկըւած արքունի ձիաւոր և հետեւակ մասնաւոր զօրքերը՝ Ճանապարհին գոլելը և պարկեշտ շարժմունքով անցնելնուն համար, Պէօլթահեայի և Պուաահիսարի կողմերէն շնորհակալութեան եկած խուղթերը՝ 26 նումերայով տպուած Լրոյ գրին մէջը յիշուած էր․

Նմանապէս այս անգամ Մուստանայէն մինչեւ Խօնեայ՝ Ճանապարհի վրայ գտնըւած քաղաքներու դատաւորներուն կողմանէ եկած յայտարար գրերուն մէջը այսպէս գրըւած էր․ Անատոլուի կողմին ընդհանուր հրամանատար Հիւսէյին փաշային հետը առկեց յառաջ հրամանատարութեամբ ծովէն Մուստանիայ խրրկըւած արքունի զօրքերուն՝ հետեւակ առաջին լիվային՝ առաջին և երկրորդ գունդերուն զօրավարները և զօրքերը՝ յիշեալ տեղերէն թէ անցած ատեննին և թէ հանգիստ ըրած ատեննին՝ գեղեցիկ կարգադրութեամբ շարժելնուն համար, այն քաղաքներու բնակիչները ուրախութիւն և շնորհակալութիւն ցցուցած են․

Նաեւ այն յայտարար գրերը՝ Գերիգէ Խասսա Ահմէտ փաշայի կողմանէ՝ փաշային դուռը մատուցանելով, անկեց ալ Ինքնակալին աղաւարարութիւն եղաւ․ Նաեւ այն գրերուն համար տրուած արքայական հրամանագիրն ալ այս էր․ Բարձրեալն ած՝ բոլոր կարգադրեալ զօրքերուս բարի Ճանապարհ պարգեւէ․ և անոնց երեսէն դէպ՚ի մեծի տէրութենս կողմը աղէկ ծառայութիւններ յառաջ գալով, թէ իմ Թագաւորական անձս՝ և թէ իմ կրօնքիս և տէրութեանս բոլոր հաւատարիմ ծառայներս ուրախացընէ, ամէն․

Նաեւ այս կերպով իր արքայական բարի ջանացողութիւնը յայտնելով ամէն ծառաներն ալ իրենց սովորութիւն ըրած բարեմաղթութիւնը՝ այժմ կրկնապատկեցին․ Ուստի Արքային այս բարի ջանացողութեան նշանէն շուտով աղէկ պտուղը տեսնըւիլը՝ աստուծմէ կը յուսացուի․

---

Գարնան եղանակին սկիզբները Թագաւորական ձիերը Քեադըխանէի չայիրը խրրկըւելու օրը՝ նոյն տեղը եղած արքունի միրախօր ըսուած ամարանոցը (քէօշկը) առփա էմինի գտնըւողներուն կողմանէ՝ Ինքնակալին համար խրախճան (զիաֆէթ) պատրաստըւիլը՝ ՚ի վաղուց սովորութիւն եղած էր․

Ուստի այս անցեալ ամսոյն զիլհիճճէին 16 ին՝ հինգշաբթի օրը՝ արքայական ձիերը Քեադըխանէի չայիրը խրրկըւեցաւ․ և նոյն օրը մերձիշեալ կերպովը՝ այն արքունի ամարանոցը այժ-

ձեան ղաշրէի նաւըը և միանգամայն առ-
փա էմինի էղօղ հաճի Ալի աղայն
խրախճանքը պատրաստեց . և Ինքնակալը
անոր ըրած ծառայութեը հաճելով, այն
զուարճալի տեղը գնաց մինչև երեկոյ
նստաւ . և ետ դառնալու ատենը՝ ար-
քունի Թէրսանէն ալ գնաց :

Եւ Կապուտան փաշային հետը խըր
կըված նաւատորմիղէն ( տօնանմայէն )
'ի զատ՝ եօթէն հասցընելու դիտաւո-
րութ՟ դեռ չըկատարված արքունի նա-
ւերը շուտով կարգադրելով պատրաս-
տէլնուն համար, արքունի Կապուտա-
նէյին գափուտան պէկը՝ և Թէրսանէին
ուրիշ երևելի անձինքը՝ իր Թագաւո-
րական ներկայութենը բերել տվաւ . և
իրենց վերաբերեալ գործքերուն վրայ
պատվէրները տալէն յետոյ՝ իր ծովէ-
զէրեայ ապարանքը ետ դարձաւ :

—

Իստամպօլու գատը մօլլաճըք զատէ
Սէրվէթ էֆէնտիին ժամանակաւոր պաշ
տօնը՝ այս անցեալ ղըլհիճճէի վերջը լը-
րացաւ . և այս մուհարրէմին սկիզբէն
սկսելով, նոյն պաշտօնը նախկին ըստամ
պօլու գատը սէլիմ մօլլա զատէ սէյիտ
Ապտուլլահիմ էֆէնտիին՝ երկրորդ ան
գամ շնորհեցաւ :

—

Պօսնայի բդեշխ Մահմուտ համտի
փաշային՝ անկեց յառաջ Պօշնախի ա-
պստամբներուն հետը ըրած պատերազմ
ներուն մէջը՝ ողորմութ՟ ամենակալին
և բարեսրտութ՟ ինքնակալին՝ ինչ կեր-
պով յաղթօղ և զօրեղ գտնըվիլը՝ 26
նոյեմբրայով տըպված Լրոյ գրին մէջը
յիշված էր :

Նմանապէս այս անգամ ալ Եպար-
քոսին կողմանէ եկած Թըղթերէն իմաց-
վեցաւ . որ Ֆօճէ և Մոսթար ըսված
քաղաքներուն բնակիչները՝ ինկըզանանէ
անոնի Սէրայ ըսված տեղին բնակիչնե-
րուն հետը միաբան ըլլալով, ամենևին
մէկ ժամանակմը իրարմէ զատվէլնին Թէ
և պատահած չէր . բայց հզօր տէրութ՟
անանկ անդիմադրելի կարողութինը երբոր
տեսան, Ֆօճէին բնակիչները մեղայ գա-
ցէին : Եւ վերոյիշեալ Եպարքոսին հե-
տը եղած Ֆօճէցի Զուլֆիգար փա-
շային իրենց մուսէլլիմ դըրվէլու աղա-
չեցին . Ուստի ան ալ զանոնք ապահով
և աներկիւղ ընելով, ներողական հրա-
մանագրերին հետը՝ անոնց խընդրած փա-
շային ալ՝ բաւական զօրքով մուսէլլիմ
խըրկեց :

Եւ Չէլէպի փազարի ըսված քաղա-
քէն ալ մեղայի համար մարդիկ Թէև ե-
կածէին, բայց Փէրաեօլի պատերազմին
մէջը ցիր և ցան եղած բոլոր ապստամբ-
ներուն գլխաւորը գտնըվօղ՝ սէրխօշ
Ալի փաշայ ըսված անմիտը յաղթվելէն
յետոյ, շիտակ Չէլէպի փազարին կող-
մը գացած հոն ապաստան եղած էր :

Եւ նոյն Սէրայ ըսված տեղէն՝ և
անոր ընդարձակ ճանապարհին մէջը ե-
ղած Պէրաճէ գիւղաքաղաքէն՝ անոնց-
մէն հինգ ժամ հեռու Ալաճա խան ըս-
ված տեղը՝ իր շինված դիրքին պատճա-
ռովը ամուր բերդի պէս՝ Պօսնայի Սէ-
րայ ըսված տեղին դէմը կեցած էր :
Անոր համար ապստամբներուն կողմանէ
այն տեղերուն դեռ հաստատուն չըտըր-
ված՝ զանոնք տիրելը պէտք ըլլալով վե-
րոյիշեալ փաշային քէհեայ Հասան ա-
ղային՝ և Եպարքոսին տիվթիտար Մահ
մուտ աղային գլխաւորութ՟ը, Թօսգայի և
Պէղաւի զօրքերէն՝ բաւական զօրքեր
խըրկըվէր էն :

Ուստի Պէրաճէի մէջը գտնըվօղ
ապստամբները առանց պատերազմելու՝
Թշվառութ՟ փախերեն . և այն գիւղաքա-
ղաքը տիրվելով, քիչմը Թնդանօթ և շատ
պիտոյքներ ալ առնըվեր է :

Եւ անկեց ալ Ալաճա խան ըսված
տեղը երբոր նոյն զօրքերը գացեր են,
հոն տեղի ապստամբները կռւելու յան-
դգնելով՝ մէկ քանի ժամ անոնց հետ ալ
պատերազմ ըրեր են . և Սարայ ըսված-

տեղին կողմանէ օգնութիւն եկած խումբը ձիաւոր ապստամբներուն ալ՝ պատերազմական ձեւովը պաշարելով բռներ են ։

Արդ՝ գոհութիւն է Արքային բարի կամեցողութեանը՝ խումբը ապստամբները յաղթելով, ցիր և ցան ըրեր են . և պատերազմի մէջ մեռածներէն ՚ի զատ՝ 120 ապստամբ ալ ողջ բռներ են ։ Ու հիմա այն տեղերուն մէջը յարմար տեսնուած տեղերը՝ Թաբեաներ և լօղօններ շինելով, հարկ եղած հաստատութիւնները ՚ի գործ դրուիլը յայտնի եղաւ ։

Ուստի Չելեպի փազարի քաղաքը՝ Պէրաձէ և Ալաձէ խան ըսուած տեղերուն ետեւի կողմի պէս եղած ըլլալով, Հիւսէյին գափուտան ըսուած չարին ալ՝ յիշեալ Սարայի տեղէն ելեր, նոյն խանի կողմերը բարբարական և Թշնամական կը շրջի ։

Ապա այսուհետեւ ասանկ պատահելու պատերազմի մէջը ինչպէս որ պէտք է ալ ապստամբները պատժելու հարկ եղած պատճառները ՚ի գործ դրուիլը, և եպարքոսին ալ այս անցեալ զիլհիճճէին 28 ին՝ Իւսկիւպէն ելած շիտակ Պօսնա երթալը՝ եկած գրին մէջը յիշուած էր ։

Ուստի այս աւետաւոր նշանները օգնութեամբ յաւիտենականին՝ Պօշնակի ապստամբներուն բոլորովին յաղթուելունուն, և Պօսնացիներուն ալ այս մերձ օրերս հնազանդ ըլլալնուն՝ բարի նշան համարուած ըլլալով, այս ուրախական լուրերը բերող սուրհանդակներուն կապա և պարգեւներ տրուեցաւ ։

—

Եպարքոսին աւետաւոր գրերը գալէն յետոյ՝ Պօսնայի բդեշխ Սահմուտ փաշային ալ գրերը եկաւ . ուստի Պօսնայի նահանգին մէջը եղած Իզվէրնիգի գաւառը՝ նոյն նահանգին մօտ ըլլալով՝ շատ անգամ Պօսնայի բդեշխ գրանդվօղներուն կցորդելով, և երբեմն ալ զատ շնորհուած կըլլար . հիմա նոյն Իզվէրնիգի գաւառը Պէլղրատու կողմը եղօղ՝ Օսման փաշային Թէեւ յանձնուած էր, բայց Ինքնակալին հրամանագրին կերպովը նոյն գաւառը՝ Պօսնայի նահանգին հետը կցորդելով, վերյիշեալ Սահմուտ փաշային յանձնուիլը յարմար ըլլալուն համար՝ անոր շնորհեցաւ ։ Ու անոր խափու քէհեասին ալ կապա հագաւ . և անկէց եկած սուրհանդակներուն ալ՝ կապաներ և պարգեւներ տրուեցաւ ։

—

Անատօլուի մուհասէպէճիութիւնը՝ անցեալ արքայական շնորհումներուն ժամանակը՝ հաճի Ապտի էֆէնտիին շնորհուած էր, բայց այժմ մեռած ըլլալուն համար, նոյն պաշտօնը յառաջմանէ մալիէի Թէզքէրէճի Նուրի էֆէնտիին՝ արքայական հրամանով այս անցեալ զիլհիճճէի 16 ին՝ հինգշաբթի օրը կապա հագցընելով անոր շնորհեցաւ ։

—

Առջի գրերուն մէջ յիշուած կերպովը՝ ամէտի խալֆաներէն Մուստաֆա պէկին՝ յառաջմանէ Ր[illegible] մեծ պաշտօնը շնորհուած էր ։

Ու Իսմայիլ գուստի էֆէնտիին ալ արքայական շնորհումներուն ատենը՝ սէհիմներու Մուգաթաճիութեան պաշտօնը յանձնուած էր ։

Ու անցեալները Նաֆի էֆէնտիին ալ Պէկլիկ քէսէտարութէ պաշտօնը շնորհ ըլլալուն համար, նոյն օտային մէջը մէկ յառաջադէմ անձմը պաշտօնատար դրուիլը պէտք եղաւ . անոր համար արքունի դիվանի խալէմին մէջը միւհիւմմէի ընտիր գրագիրներէն՝ այժմեան Անատօլու մուգաթաճի խօճաքեան սէյիտ Մէհէմէտ շէքիպ էֆէնտին՝ ճարտար և գիտուն և լաւ գրագիր ըլլալուն համար, այս անցեալ ամսոյն զիլհիճճէի 24 ին՝ ուրբաթ օրը արքայական հրամանով նոյն օտային պաշտօնը անոր յանձնուեցաւ ։

# ԳՈՐԾՔ ԶՕՐԱՑ

Գնդապետ Բէքիր պէկը՝ որ ասկէց յառաջ պաշտօնատարութեամբ Նիշ կըկենար, այս անցեալ ամսոյն զիլհիճճէին 27 ին՝ արքունի հրամանով իր ներքևը գըտնըված ձիաւոր մանսուրէ զօրքերուն երրորդ գունդը՝ բոլոր զօրավարներով և զինուորներով արքայանիստ քաղաքը եկան. և անոնց ձիերը չայըրը խըրկըվեցան. և երբ չայըրէն գան, այն ժամանակը նոյն զօրքերուն ալ մէկ պաշտօնմը տըրվիլը կըյուսացվի.

Խօնէայ քաղաքէն արքայանիստ քաղաքը եկած բարեւագրէն իմացուած է.

Յաջողութեամբ բարձրելոյն Անատօլուի կողմին ընդհանուր հրամանատարին հետը՝ հարկ եղած կողմը գընացող արքունի յաղթող բանակին ծառայները, այս անցեալ ամսոյն զիլհիճճէին 8 ին՝ Խօնեայի քաղաքը հասան. և նոյն քաղաքին լայնարձակ դաշտին մէջը պատրաստ եղած վրաններուն (չատըրներուն) մէջը հանգիստ եղան.

Եւ արքունի և մանսուրէ զօրքերուն՝ թէ զօրավարներուն և թէ հասարակ զօրքերուն շարժմունքնին, և իրենց վերաբերեալ գործքերուն մէջը ցոյց տըված հնազանդութիւննին, և թէ անոնց կարգադրութիւննին և վայելուչ գործքերնին, ամէնուն ժամանակմը ոչ լըսված և ոչ տեսնըված ըլլալուն համար, նոյն քաղաքի բնակիչներուն թէ մեծը և թէ փոքրը՝ շատ ուրախացան.

Աստի թէ Խօնեայի և թէ անոր չորս կողմը գըտնըված գիւղաքաղաքներուն և գիւղերուն բնակիչներուն երևելիները՝ և մեծամեծները՝ և հարուստները՝ և աղքատները՝ թէ մեծը և թէ փոքրը շուտովմը անոնց առջևը ելլալով, կատարեալ յարգութիւն և պատիւ ուրախութեամբ ցոյց տըվին.

Եւ վերոյ այս զօրքերուն աստնկ գեղեցիկ շարժմունքներուն և կարգադրութիւնը պատճառովը, թէ Իսլամականին երջանիկ անձին՝ և թէ կարգադրեալ արքունի զօրքերուն համար՝ զատ զատ բարեմաղթութիւններ ըրին.

Սոյն երջանկայիշեալ ամսոյն 10 ին՝ Հիւսէյին փաշային ալ յաջողութեամբ Խօնեայ հասաւ. և նոյն օրը 40 հազարէն աւելի կարգադրեալ արքունի քաջայաղթ զօրքերն ալ՝ իրենց կանոնաւորեալ զէնքերը վրայնին ունենալով հոն հաւաքվեցան. և այս կերպ հաւաքումը՝ առաջին ժամանակները տեսնըված չըլլալով նայելու և ուրախանալու արժան տեսարանմը եղած ըլլալուն համար, խիստ շատ մարդիկ տեսնալու եկան.

Ապա այս արքունի զօրաց կարգադրութիւն և կրթութիւն գեղեցիկ պտուղը ըլլալով, ամէն ալ միաբան և մէկ մարմինի պէս կըրթըվելու և կըրթելու կատարեալ ջանք և յօժարութիւն ունենալնին յայտնի եղաւ.

Աստի այս զօրքերուն առողջ և զօրեղ մարմնով՝ իրենց կարգադրութեան շարժմունքները, և անոնց հագուստներուն և զէնքերուն մաքրութիւնը տեսնօղներուն վրայ՝ կատարելապէս երկիւղ և զարմանք եկաւ. մինչ զի եթէ ձեր յարգութիւն ալ՝ մեր հետը հոն գըտնըվելու ըլլայիք, աչօք տեսնալով կըզարմանայիք. և անոնց ահարկու ներգործումը՝ բնակիչներուն և ներկայ գըտնըվօղներուն շարժմունքներէն կըհասկընայիք.

Արդ՝ նախայիշեալ ամսոյն 12 ին գաւառապետ Պէքիր փաշային լիվան՝ Խօնեայէն դէպ'ի յառաջ գնաց. և ուրիշ զօրքերն ալ մէկ երկու օր միջոց տալով, հետզհետէ իրենց հրամանատարութեան տեղը երթալու կըհետևին.

Եւ Խօնեայէն մինչև Անթէքեայ 28 իջևան (խօնախ) թէև կարգադրեցաւ, բայց բոլոր զօրաց գունդերը կատարեալ փափագ և ջանք ունենալնուն համար,

իրենց տեղէն մինչև հրամանատարութեան տեղին մէջը եղած հեռաւոր միջոցը անդադար ընթանալով, իջևանի մէջ հանգիստ չառնելու փափագ ունենալնին յայտնի եղաւ։

Աւստի Անատոլուի կողմի ընդհանուր հրամանատարն ալ՝ այս կարգադրեալ զօրաց սաանկ ջանքերնուն և փափագներնուն հաճոյ և թոյլտուութիւն տալով, և արեգական ջերմութը չընայելով, շարունակ երթալնուն համար՝ այն յիշեալ իջևաններուն թիւը պակսեցընելը կարելի է։

Եւ ասկէց յառաջ Ռումէլեայի կողմը խրկըւած դաւառապետ Հայտար փաշային լիվան ալ՝ արքունի բանակին շարժմունքին հետևելով, իր պաշտօնատարութիւնը ՚ի գործ դնելը կըյուսացուի։

Եւ մինչև հիմա այս կողմերը դոհունի ամէն տեսակ զահրէները առատ ըլլալով, արքունի զօրաց անցած տեղերուն և ճանապարհներուն ուռծիկները բաժնելու ալ ջանքը ՚ի գործ դըրված է։ Եւ օգնութեամբ բարձրելոյն և հովանաւորութեամբ արքայի՝ մէկ կերպով մը աշխատութիւն չըկըրելնին յայտնի է։

---

Անցեալ զիլգատէին ամսոյն արքունի զօրաց հիվանդանոցը՝ 325 հիվանդ մներ, և 411 հոգի առողջացեր ելեր է. միայն 6 հիվանդ մեռեր է։

Իւսկիւտարու Թօփթաշիի հիվանդանոցը՝ 38 հիվանդ մներ, և 53 հոգի առողջացեր ելեր է. և ամէնևին մէկը չէ մեռեր։

Մալթէփէի հիվանդանոցը՝ 254 հիվանդ մներ, և 406 հոգի առողջացեր ելեր է. միայն 20 հոգի մեռեր է։

Արքունի Թէրսանէի հիվանդանոցը՝ 711 հիվանդ մներ. և 806 հոգի առողջացեր ելեր է. միայն 18 հոգի մեռեր է։

Մուհիմմաթի հարպիէյի հիվանդանոցը՝ 57 հիվանդ մներ, և 131 հոգի առողջացեր ելեր է. միայն 7 հոգի մեռեր է։

Թօփխանէի հիվանդանոցը՝ 87 հիվանդ մներ, և 95 հոգի առողջացեր ելեր է. միայն 5 հոգի մեռած ըլլալը՝ օրական գրերէն յայտնվելը, արքունի բըժշկապետին կնքեալ ցուցակ թըղթերուն մէջը յիշված է։

---

## ԳՈՐԾՔ ԱՐՏԱՔԻՆ

*Մարտի 28 էն՝ այսինքն անցեալ շաբաթէ առաջին 8 էն գրված և այս անգամ եկած Լոնդրայի լրագիրներէն առնըված մէկ քանի նոր լուրերուն համառօտ թարգմանութիւնն է։*

---

Գօլէռա ցաւին սաստիկ մեռցընելու երկիւղը՝ ընդհանրապէս Ռուսի և Նէմցէի երկիրներուն մէջը գտնըվող բնակիչներուն տիրած ժամանակը, նոյն ցաւը Ֆրանսայի երկիրն ալ պատահելով՝ այն տեղի բնակիչները կերպ կերպ խռովութեան մէջ ինկան։

Սակայն այս ցաւը ասկէց յառաջ երբոր Ինկիլթէրայի երկիրն ալ պատահեցաւ, սաստկութեան պատճառը շատ քիչ ըլլալուն համար՝ անոր երկիւղը՝ ապահովութեան փոխվեցաւ։ Աւստի մարտի 15 ին՝ Փարէզի քաղաքը Գօլէռա ցաւէն մէկ քանի հոգի մեռնելը երբոր իմացվեցաւ, քիչ մարդ վախցաւ։ Եւ յետոյ նոյն ցաւը մօտ երկիրները որ յառաջմանէ պատահած էր, անոնցմէ աւելի Փարէզի երկիրին պատահելով. յիրաւի շատ ահ և երկիւղ տըվօղ թէև եղած էր, սակայն մէկ քանի անյարմար դիպուածներ ալ ըլլալով՝ առաւել ևս սաստկացաւ։

Եւ 20 ամիս յառաջ Փարէզի մէջ պատահած խռովութենէն մինչև հիմա երկրի ժողովուրդը՝ կերպ կերպ տառապանք և նեղութիւն կրած էր. և արհեստաւորները և շինական հողագործ ժողովուրդը առաւելապէս անգործ և դատարկ մնալով, աղքատներուն և կարօտ-

ներուն շատնալը՝ մարդկանց ափշութիւն բերելու պատճառ հասած էր․ Հիմա ալ Կօլէրա ցաւին պատահելու պատճառը մէկ քանիմը յառաջ եկած ըլլալով, խռովութի հանելու մէկ առիթմը ըլլալը թէև խորհված էր, սակայն այն ցաւին պատահելը՝ աղմունք բերող յատուկ առատութի նուազութը պատճառ եղած երևելով, Փարէզի տէրութիւնը հարկաւ այս ցաւին առատկութիւնը նուազեցընելու կերպը խորհած էր․ և անձի առողջութեան յարմար մէկ քանի նախապատրաստական պահպանող դեղերու ձեռնամուխ ըլլալով, նոյն ցաւը վերցընելու շուտով քանիմը օգտակար ծանօթութիւները Պազէթա թղթերուն մէջը տըպել տրված՝ փողոցներուն պատին վրայ փակցընելով, և ճանապարհներուն անց ու դարձի տեղերը պըտըրտցընելով, բազմութեն իմացուցած էր։

Նաև այս ինչ բանը ուտելու, և այն ինչ բանը չուտելու, և շատ գինի չըխմելու, և անձը պահպանելով վնասակար ուտելիքներէն ետ մընալու համար՝ ամենուն ալ պատվէրներ թէպէտ եղած էր․ սակայն այս պատվէրներուն հարկաւորութիւնը՝ մէկ քանի արհեստաւորներուն և վաճառականներուն իրենց ապրանքը չըծախվելուն պատճառով եղած վնասներնուն համար դըժվարելով՝ սկըսեցին Կօլէրա ցաւը սուտ հանել․ իբր թէ տէրութիւը իրեն վերաբերեալ մէկ քանի գործքերը յառաջ տանելու համար՝ այս անհաստատ բանը տարածեր է․ և այս կերպով իրենց տէրութենէն գանկատ ըրած էին։

Փարէզի ժողովուրդը առջին անգամ՝ Կօլէրա ցաւին խիստ չըհաւատալով՝ անոնց մէջէն ստորին մարդիկները իբր թէ կորիճութի և անվախութի ցոյց տալով, իրենց ժամանակը գինետուններու մէջ ուրախութ անցընելնուն պատճառով, շատ մարդ մեռած էր։

Աւասի Կօլէրա ցաւին պատահելէն երկու ամիս յառաջ՝ Փարէզին ինքնիսապը նոյն երկրին մէջը գտնըված աղբիւսները և աւլուքները յատուկ շինուած սայլերով (առապաներով) վերցընել տալու համար՝ Նաջուպ անունով մէկուն հետը գինը կտրեց․ բայց էսկիճի և տրայիճի եղօղները՝ որ աղբիւսներուն և աւլուքներուն մէջը որոնելով վաստակ կընէին, անոնց վերցըվելէն իրենց շատ վնաս ըլլալը իմացան․ անոր համար բանւորներէն և հողագործներէն և ասոնց նման մարդիկներէն՝ խիստ շատը հետերնին առնելով, իրենց ժողովը շատցուցին․ և այն քիչեալ նորաշինար սայլերուն հանդիպած ատենին, զանոնք կըկոտրէին և կայրէին։

Նաև այն միջոցները կերպ կերպ սուտ խօսքեր ալ տարածվեցաւ․ իբր թէ տէրութիւը՝ աղքատները թիւնաւորելով (զեհիրլէմիշ ընելով) վերցընելու կըհետևի․ անոր համար այս անգամ մեռնող մարդիկները՝ Կօլէրա ցաւէն չէն, այլ անկարծելք թիւնաւորվան մեռած են։

Սակա այս կերպ խօսքով հասարակութին ալ յայտնի գոչելու համարձակութ պատճառը հասած էր․ և մէկ քանի ապստամբ և անզգամ մարդիկներ ալ՝ զատ իրենց չարութիւը ՚ի գործ դնելու դիտաւորութ, ժողովուրդին հաւատալը այս գէշ կարծիքին՝ իրենց դիպուկ ատեն համարելնին կարելի էր․ միայն գըլխաւորներուն և իհծխապին որոնելուն կերպին՝ և ճարտար բժիշկներուն քիմեայով դեղերուն գործածութը նայելով, գինին թիւնաւորածեն ըլլին։

Աւասի ժողովուրդին չար կարծիք ըրած՝ մարդիկներուն վրայ գըտնըված դեղերուն մէկը՝ ամենևին կերպովմը թիւն չունենալը, և գինիին թիւնաւորված չըլլալը, տէրութ կողմանէ պաշտօնատարներուն քննութիւը մինչև հաստատվեցաւ, Փարէզին բոլոր ժողովուրդը՝ քիչեալ գինիին թիւնաւորված ըլլալուն ըստոյգ հաւատալնուն համար, իրենց կարծիք ըրած գինեվաճառներուն տեղերը մտան․ և ամէն կողմանէ այն խեղճերուն վրայ դիմեցին․ և որը սպա-

տեկ ծեծելով, քաղաքին մէջէն վազած Սէնա ըսված գետը ձգեցին. և որն ալ հրապարակին մէջը չարաչար ծեծելով, կիսամեռ թողուցին։ Սակայն այժմ՚ այս ահի և երկիւղի դիպուածները վերնալով, Գօլէռա ցաւին ըստոյգ ըլլալը ամէն ալ իմացան։

Եւ առաջին անգամին այն ցաւէն՝ միայն աղքատները և խեղճերը բռնըւելով, հետ զհետէ մեծամեծ մեռանէր թէև եղաւ. հիմա նոյն ցաւը սաստիկ չըլլալով, հարուստ մարդիկներուն պատահելը յայտնի կերևի։

Փարէզի՝ 800 հազար հոգի բնակած երկրին մէջը՝ Գօլէռա ցաւին սկսելէն մինչև հիմա ցուցակ գրին նայելով, նոյն ցաւէն հիւանդացող՝ 2615 այր մարդ, և 1288 կին, որ ամմէնը 3903 հոգի եղած է։ Եւ այս ցաւէն մեռնող՝ 992 այր մարդ, և 502 կին, որ ամմէնը 1494 հոգի եղած է։

---

Ֆիլէմէնկի և Պելճիգայի երկիրները մէկ զմէկէ բաժնըւելու կարգադրութեը համար՝ անկէց յառաջ Լօնտրա քաղաքը եղած խօսակցութեն ժողովին մէջը՝ հինգ տէրութեց երեսփոխաններուն գիտութեը վերջաւորութէ տըրված պայմանագրին վկայականները՝ երկուամիս յառաջ Ֆրանսայի և Ինկիլթէրայի տէրութիւններուն կողմանէ տըրվեցաւ։

Եւ Ռուսի և Պրուսիի և Նեմցեի երեք տէրութեց կողմանէ ալ՝ մարտի 19 ին՝ վկայականներուն փոփոխակի տըրվիլը, հիմա Լօնտրայի ժողովին երեսփոխաններուն կողմանէ նոյն ամսոյն 31 ին՝ յառ կացեալ ըլլալը կըյայտնըվի։

---

Ռուսի տէրութիւնը այսուհետև ժամանակին բերմունքին նայելով՝ Ֆիլէմէնկի տէրութեը հետ ուրիշ տէրութիններուն մէջոցը գըտնալու համար, Լօնտրայի ժողովէն ետ քաշվելուն լուրը ըստոյգ ըլլալով կըպատմըվի։

Ֆիլէմէնկի տէրութիւն ալ՝ նոյն պայմանագրին մէջը գըրված 24 պայմանները ընդունելու համար, թէ Ռուսի տէրութեը կողմանէ՝ այս բանին կարգադրութեը համար իր կողմը յատուկ խըրկըված՝ Կօնթէ օւրլօֆ ըսված պաշտօնատարին հարկադրութէ համոզելուն, և թէ Ինկիլթէրայի և Ֆրանսայի տէրութեց կողմանէ հարկադրութեւ յայտարար գրերուն՝ մինչև հիմա անխախտ դէմ կեցած է։

Եւ յիշեալ պայմանագրին մէջի գըրվածները՝ իրեն կողմանէ չընդունելէն յառաջ, հինգ տէրութեց կողմանէ՝ այն պայմանագիրը պէտք եղած կերպովը կարգի դնելու թոյլտըվութ և հաւանութ ցոյց տըրվիլը կըխնդրէ։

---

Ֆրանսայի և Ինկիլթէրայի տէրութիներն ալ՝ Ֆիլէմէնկի տէրութեը խընդիրքին այսպէս պատասխան տըրված են. որ իրենց ստորագրութեըը հաստատեալ պայմանագրին մէջէն ընաւ բանմը վերցընելը՝ կամ փոփոխելու իրենց [illegible]ւոյն և տէրութեը դէմ է։

---

Թէ Ֆիլէմէնկի բանակը և թէ Պելճիգայի զօրքը այս միջոցները պատրաստութեն վրայ ըլլալնին՝ Եւրոպայի Գազէթայ թըղթերուն մէջը գըրված է։